ՀՀ ԱԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ Սահմանադրական օրենքի 96-րդ հոդվածը, կից ներկայացնում եմ «Հայաստան» խմբակցության որոշումը «Վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծն (Կոդ՝ Պ-057-04.10.2021-ՊԻ-011/0) արտահերթ հարց համարելու մասին՝ այն սահմանված կարգով ՀՀ Ազգային ժողովի 2021թ. նոյեմբերի 16-ին գումարվող հերթական նիստերի երեքշաբթի օրվա երկրորդ հիմնական նիստում քննարկում կազմակերպելու նպատակով:

Առդիր 2 էջ:

«Հայաստան» խմբակցության քարտուղար **Ա. Մինասյան**

10.11.2021թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
«ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

0095, ՀՀ, Երևան, Մ.Բաղրամյան պող. 19, +374 11 51 32 05,

«ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ «ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾՆ ԱՐՏԱՀԵՐԹ ՀԱՐՑ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետով, 40-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 96-րդ հոդվածով, ՀՀ Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության կանոնադրությամբ,

Կարևորելով «Վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով (Կոդ՝ Պ-057-04.10.2021-ՊԻ-011/0) (հեղինակ՝ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արամ Վարդևանյան) առաջարկվող կարգավորումը:

Նկատի առնելով այն, որ նշված՝ «Վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովը՝ ՀՀ Ազգային ժողովի Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովը 10.11.2021թ. նիստում տվել է բացասական եզրակացություն:

Հաշվի առնելով «Վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի հեղինակ, «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արամ Վարդևանյանի համաձայնությունը,

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի «ՀԱՅԱՍՏԱՆ» խմբակցությունը

ՈՐՈՇԵՑ

1. Անհրաժեշտ համարել «Վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի քննարկումը Ազգային ժողովի նիստում:
2. «Վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը համարել արտահերթ հարց, որը քննարկման է ենթակա ՀՀ Ազգային ժողովի 2021թ. նոյեմբերի 16-ին գումարվող հերթական նիստերի երեքշաբթի օրվա երկրորդ հիմնական նիստում:
3. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահին՝ սույն որոշմամբ նախատեսված հարցն ընդգրկել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հերթական նստաշրջանի օրակարգ և կազմակերպել դրա քննարկումը սույն որոշման 2-րդ

կետում նշված նիստում, որպես ընդդիմադիր խմբակցության կողմից արտահերթ համարված հարց:

4. «Վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի հիմնական զեկուցողն է «Հայաստան» խմբակցության պատգամավոր, նախագծի հեղինակ Արամ Վարդևանյանը:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ «ՀԱՅԱՍՏԱՆ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԱՐԾՎԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ

10.11.2021թ.